# Միջազգային գիտաժողով Ազգային ակադեմիայում

**Գոհար ՍԱՐԴԱՐՅԱՆ**

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը հիմնադրվել է 1992 թ. միջպետական համաձայնագրերի հիման վրա: 1994 թվականից մեր երկիրն անդամակցում է այս կենտրոնին: Առայժմ համագործակցությունն ընթանում է հաջողությամբ: Ակնառու են արդյունքները: Միայն մեկ փաստ. այս տարիների ընթացքում միջազգային գիտատեխնիկական կենտրոնը մեր երկրին է հատկացրել շուրջ 9 մլն դոլար 56 գիտատեխնիկական նախագծերի իրականացման համար:

Երեկ ՀՀ ԳԱ ակադեմիայի դահլիճում իր աշխատանքներն սկսեց Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի եւ ՀՀ կրթության ու գիտության նախարարության կողմից կազմակերպված գիտաժողովը: Գիտաժողովի թեման էր. «Հայաստանի կոնվերսիոն ներուժը եւ միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ծրագրերը»: Այն ընթանում է ՄԳՏԿ–Հայաստան–2000 խորագրի ներքո:

Հնգօրյա գիտաժողովին մասնակցելու համար Հայաստանում են գտնվում ՄԳՏԿ–ի տարբեր ներկայացուցիչներ, գիտնականներ եւ մասնագետներ ԱՄՆ–ից, Եվրամիությունից, Ճապոնիայից, Ռուսաստանից, Վրաստանից:

Գիտաժողովի լիագումար նիստերի ընթացքում կհնչեն դասախոսություններ ամենաբազմազան թեմաներով: Մասնավորապես՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, հեռուստահաղորդակցություն, կառավարման համակարգեր», «Բիոտեխնոլոգիա, կյանքի մասին գիտություններ», «Ֆիզիկա», «Քիմիա», «Երկրաբանական եւ շրջակա միջավայրի անվտանգություն եւ մոնիտորինգ» եւ այլն:

Գիտաժողովի նպատակն է ներկայացնել գիտության եւ տեխնիկայի տարբեր ճյուղերում ու ոլորտներում առկա կոնվերսիոն հետազոտությունները եւ մշակումները, ցույց տալ մեր հանրապետությունում ՄԳՏԿ–ի կողմից առաջարկվող եւ իրականացվող ծրագրերի հիմնական պատկերը: Միաժամանակ կքննարկվեն եւ կընդգծվեն Հայաստանի Հանրապետությունում ՄԳՏԿ–ի գործունեության հետագա հիմնական ուղղությունները:.

Գիտաժողովը բացվեց ՀՀ ԳԱ ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի ողջույնի խոսքով:

Աշխատանքային առաջին օրը տեղի ունեցած լիագումար նիստերի ընթացքում լսվեցին մի շարք ընդարձակ զեկուցումներ: Այդ աշխատանքներն ընթացան առանձին բաժանմունքներում:

